

**ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ԳԻՐԵՐ  
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՄԻԱԻՈՐՄԱՆ  
ԵՒ ՆՈՐ ԱԲԲԱՀՈՐ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք  
ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՆԻՆ**

**22 Յուլիսի, 2000 թ.**

Հ. 51

**ՀՈԳԵՇՆՈՐՀ  
ՀԱՅՐ ԵՂԻԱ. Ռ. ՎԱՐԴԱՊԵՏ ՔԻԼԱՂՊԵԱՆ  
Վեմետիկ, Խոտալիս**

**Սիրելի Հայր Սուրբ,**

Հոգու բերկրանքով տեղեկացանք, որ Վենետիկի ու Վի-  
եննայի Մխիթարեան աւանդաշատ ուխտերը համախմբուելով  
Հնդկանուր Մխացեալ ժողովի, կայացրել են միաւորման ող-  
ջունելի որոշում եւ Մխիթարեան վերամիաւորուած Մխա-  
րանութեան Հնդկանրական Արքահայր ընտրել քաջագէտ ու  
նուիրեալ Հոգեւորականիդ:

Հաւատով է լցուած մեր Հոգին, որ Մխիթարեան  
ուխտեալ Մխաբանութիւնը՝ վերամիաւորմամբ վերստին  
համախմբած իր ոյժերը, շարունակելու է Հոգեւոր-մշակու-  
թային իր մեծարժէք ծառայութիւնը հայ ազգային կեանքում:

Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջ-  
միածնից Հայրապետական սիրով Մեր օրհնութիւնն ու բարե-  
մաղթանքներն ենք յղում Ձեզ՝ հայցումով առ Աստուած, որ  
Հովանաւոր իր Աջով զօրավիզ լինի Ձեզ՝ պարզեւելով բազ-  
մարդիւն երկար տարիների կեանք, յաջողութիւններ Ձեր նոր  
պաշտօնում:

**Օրինութեամբ՝**

**ԳԱՐԵԳԻՆ Բ.  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**ԳԵՐԱՊԵՑՄԱՆ Հ. ԵՂԻԱ. Շ. ՎՐԴ. ՔԻԼԱՂՊԵՏԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱՀԱՅԹ  
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ**

**Գերապայծառ Աբբահայր**

Մեծագոյն ուրախութեամբ տեղեկացանք Միջիթարեան Միաբանութեան վերամիաւորման, յիրաւի պատմական որոշման մասին, որի առթիւ ընդունէք իմ ամենաչերմ չնորհաւորանքները:

Այդ որոշման կայացումը մէկ անգամ եւս վկայում է Միջիթարեանների հեռատես իմաստութեան մասին, որը բնուրոշ է եղել նրան, իր գործունէութեան ողջ ընթացքում:

Խորհրդանշական է, որ վերամիաւորման պատմական քայլը կատարուեց Միաբանութեան հիմնադրման 300-ամենակի տօնակատարութեան նախօրէին եւ առանձնակի խորհուրդ եւ կարեւորութիւն ունի յատկապէս այժմ, երբ համայն հայութիւնը պատրաստում է նշելու Քրիստոնէութիւնը Հայաստանում որպէս պետական կրօն հռչակելու 1700-ամեակը, երբ համազգային համախմբուածութիւնը եւ միասնականութիւնը կենսական անհրաժեշտութիւն է:

Անգնահատելի է Միաբանութեան գերը հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային պատմութեան մէջ:

Ինքնին Միաբանութիւնը մի իւրովի մշակութային կոթող է:

**Գերապայծառ Աբբահայր,**

Կրկին անգամ չնորհաւորելով Ձեզ, մաղթում եմ ամենայն յաջողութիւն Ձեր պատմական առաքելութեան իրականացման գժուարին գործում՝ ի փառս մեր ժողովրդի հոգեւոր-մշակութային զարգացման եւ հարստացման:

**Խորին յարգանքով՝**

**ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ  
ՀՀ ԱՐՏԱԳԻՒ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**